Հաստատում եմ

08.09.2022 թ

Տնօրեն՝ _____ Ս.Ենգիբարյան

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի «Ներսիսյան» թիվ 6

հիմնական դպրոց

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով
տեղակալի տարեկան

ՊԼԱՆ – ԾՐԱԳԻՐ

Տնօրենի տեղակալ՝ Ս. Մամիկոնյան

Վաղարշապատի «Ներսիսյան» 6 հիմնական դպրոցի տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի աշխատանքային տարեկան պլանավորում

2022-2023 ուստարի

Համառոտ բնութագիր

Վաղարշապատի Ներսիսյան հմ.6 հիմնական դպրոցում տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի համակարգմամբ իր գործունեությունն է ծավալում դասղեկական ինստիտուտը:

Դասղեկի

գործունեությունը ներառում է

- Աշխատանք սովորողների հետ հետևյալ ուղղություններով՝
  - Սովորողների առաջնային ուսումնասիրություն, կարիքների գնահատում
  - Սովորողների կյանքի պայմանների, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցության, նրանց սոցիալական միջավայրի, շփումների, հետաքրքրությունների, հաղորդակցման դժվարությունների, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակի ուսումնասիրություն և դրան համապատասխան աշխատանքի պլանավորում
  - Դասարանում սովորողների մեջ համագործակցային փոխհարաբերությունների ձևավորում
  - Սովորողների ադապտացիայի գործընթացի կազմակերպում
  - Սովորողներին դպրոցական կյանքին ինտեգրում
  - Դասարանական միջոցառումների իրականացում
  - Սովորողների արտադասարանական, դպրոցական, համայնքային, մարզային, հանրապետական միջոցառումներին մասնակցության ապահովում
  - Մասնագիտական կողմնորոշում
  - Ուսումնական գործընթացի մոտիվացիայի բարձրացում
- Աշխատանք սովորողների ծնողների հետ հետևյալ ուղղություններով՝
  - Սովորողի կրթական գործընթացում ծնողի մասնակցության մակարդակի բարձրացում
  - Ծնողական անհատական և ընդհանուր խորհրդատվություններ
  - Ծնողավարման հմտությունների ուսուցում
- Աշխատանք ուսուցիչների հետ հետևյալ ուղություններով՝
  - Դասավանդող ուսուցիչների հետ ընդհանուր քննարկումների կազմակերպում, իրականացում
  - Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների բարելավում
  - Ուսուցիչ-ծնող կապի ապահովում
  - Անհատական խորհրդատվություններ
- Մատենավարություն, փաստաթղթավարություն
  - Համապատասխան փաստաթղթային փաթեթի վարում
  - Տարեկան պլանավորումների կազմում

- Երկշաբաթյա պլանավորումներ
- Հաշվետվություններ
- Անհատական գործեր

- Համագործակցություն՝
  - Տնօրենի, ՈՒԳ և ՄԿԱԳ տեղակալների, դասղեկների մանկավարժական խորհրդի հետ
  - Տարածքային, հանրապետական և միջազգային կառույցների հետ
  - Ծնողական համայնքի հետ
  - Երիտասարդական, կրթական, մշակութային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ

ՄԿԱԳ տեղակալի գործունեությունը ներառում է հետևյալ ոլորտները

- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը
- Աշխատանք մանկավարժական համակազմում
- Աշխատանք աշակերտական համակազմում
- Համագործակցություն համայնքի հետ
- Դպրոցում մշակութային մթնոլորտի ձևավորում
- Դպրոցում սովորողների և աշխատակազմի առողջ ապրելակերպի նյութական և բարոյահոգեբանական պայմանների ապահովում

ՄԿԱԳ տեղակալի աշխատանքների մարտավարության նախագծում

Հաշվի առնելով նախորդ ուսումնական տարում կատարված աշխատանքները՝ առանձնացրել ենք մի քանի ոլորտներ, որոնց շուրջ իրականացվելիք աշխատանքների նոր մարտավարություն ենք նախագծել:

Ստեղծել ծնողական լսարան՝ երեխայի դաստիարակության ժամանակակից սկզբունքների, մոտեցումների, մեթոդների, հնարների մասին տեղեկացնելու, կարողություններ, հմտություններ մշակելու նպատակով

• Անցկացնել հարցում

գնահատելու համար ծնողների իրազեկությունը կրթական ինովացիաներին

• Նախապատրաստել նյութեր

• Պարբերաբար անցկացնել հանդիպում- սեմինարներ

• Նախաձեռնել համատեղ միջոցառումներ

• Անցկացնել տարվող աշխատանքների գնահատում

Համագործակցություն համայնքի հետ (հասարակություն- դպրոց կապի խորացում)

Ակտիվացնել ծնողխորհրդի գործունեությունը

• Մասնակցել ծնողխորհրդի նիստերին, հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացումը

• Կազմել հանդիպումների ժամանակացույց ամբողջ ուստարվա համար

• Կազմակերպել համատեղ /ծնող, աշակերտ, ուսուցչական կոլեկտիվ/ տարեվերջյան միջոցառումներ

• Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը հրապարակել կայքում, մամուլում

Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ

• Դպրոցի միջոցառումներին հրավիրել քաղաքային իշխանության անդամներին, այդ թվում քաղաքապետին և հասարակական կազմակերպությունների ղեկավարներին

• Փոխադարձաբար ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքային և հասարակական կազմակերպությունների միջոցառումներին

• Պատրաստել տեսադիտաշարեր նշանավոր մարդկանց մասին և ցուցադրել

• Կազմակերպել և անցկացնել հանդիպում – ցերեկույթներ քաղաքի նշանավոր մարդկանց՝ արվեստագետների, արհեստագործ-վարպետների, մշակույթի գործիչների, գործարարների հետ

• Կազմակերպել այցելություններ արվեստագետների արհեստանոցներ

• Կազմակերպել և կամ մասնակցել գրողների գրքերի շնորհանդեսներին

• Կազմակերպել գրքերի քննարկումներ

• Կազմակերպել հանդիպումներ քաղաքապետի և տեղական իշխանության ներկայացուցիչների հետ

• Ակտիվորեն մասնակցել քաղաքային միջոցառումներին

• Մշտապես ծանոթանալ քաղաքի նորություններին /հեռուստաալիքի, կայքերի / միջոցով

• Հանդես գալ սեփական նախաձեռնություններով

Դպրոցում աշակերտ-ուսուցիչ, աշակերտ- աշակերտ, ծնող- ուսուցիչ առողջ աշխատանքային հարաբերությունների ապահովում

ա)խթանել, ակտիվացնել աշակերտական խորհրդի աշխատանքը

• Մասնակցել աշակերտական խորհրդի նիստերին, կատարել առաջարկություններ

• Լսել աշխատանքային ծրագրերի կատարման հաշվետվություններ՝ խրախուսելով լավագույն նախաձեռնությունների, ակտիվ մասնակցության համար

• Անցկացնել անանուն հարցումների աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ աշակերտների շրջանում

• Մասնակցել արդյունքների վերլուծությանը

• Խմբավորել առաջարկություններ՝ դրանց անդրադառնալու նպատակով

• Աջակցել աշակերտական խորհրդին իր նախաձեռնությունների մեջ

բ)ակտիվացնել ծնողխորհրդի աշխատանքը

• Մասնակցել ծնողխորհրդի նիստերին

• Առաջարկություններով հանդես գալ ծնողխորհրդի աշխատանքային պլանի մշակման համար

• Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հաղորդումով հանդես գալ

• Լսել ծնողների հաշվետվությունները իրենց կատարած աշխատանքի մասին

• Քննարկել ծնողների առաջարկությունները դպրոցի գործընթացների մասին

• Կազմակերպել համատեղ միջոցառումներ

• Աջակցել իրենց նախաձեռնություններում

գ)մանկավարժական խորհրդի աշխատանքը թափանցիկ դարձնել աշխորհրդի և ծնողխորհրդի համար

• Մանկավարժական խորհրդի աշխատանքներին /համապատասխան մասով/ հրավիրել աշակերտական խորհրդի և ծնողխորհրդի նախագահներին

• Լսել նրանց առաջարկությունները, հաղորդումները իրենց նախաձեռնությունների մասին

• Հետևել և մեկնաբանություններով մասնակից լինել դպրոցի Վաղարշապատի <<Ներսիսյան հմ.6 >> ֆեյսբուքյան էջի հեռավար հրապարակումներին

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը

Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

• էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը՝

• բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը,

• բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,

• ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ,

• նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝

• դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեք հիմնական ուղղություններ՝

• ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,

• ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,

• դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:

• հանձնարարել դասղեկներին, որպեսզի վերջիններս անվերապահորեն ծանոթ լինեն աշակերտների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը և տեղեկացված լինեն այն սովորողների մասին, որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են կամ որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ,

• կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար ՝

• կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ,

• ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը,

• ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը:

• ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ,

• ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, համատեղ ստեղծագործական գործունեությունը,

• ըստ անհրաժեշտության՝ <<Ծնողական լսարանում>> ծնողների համար անցկացնել անհատական և խմբային խորհրդատվություններ,

• դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին,

• ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

Աշակերտների առողջության պահպանում

Աշակերտների առողջության պահպանման նպատակով մեր կողմից առաջ քաշված խնդիրները նպատակ ունեն՝

• դպրոցում ապահովել սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմաններ (հակահրդեհային, անվտանգ սննդի, լուսային, ջերմային),

• սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ,

• պայքարել ծխելու վտանգավոր սովորույթի դեմ:

Աշակերտների առողջության պատշաճ պահպանումն ապահովելու ուղղությամբ նախատեսվում է՝

• հնարավորինս բացառել անորակ սննդի մուտքը դպրոց,

• կրթության և դաստիարակության գործընթացում համագործակցել դպրոցի բժշկի, հոգեբանի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ,

• հանձնարարել դասղեկներին, որպեսզի աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակի ուսումնասիրության նպատակով սերտորեն համագործակցեն դպրոցի բժշկի հետ,

• մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել արտադպրոցական բժշկական հաստատությունների հետ,

• ՆԶՊ ուսուցչի, կազմակերպիչների և դասղեկների հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ստեղծմանը,

• առարկայական ուսուցիչների և դասղեկների հետ պարբերաբար անցկացնել քննարկումներ դասարանական և տնային աշխատանքներին հատկացված ժամաքանակի վերաբերյալ,

• միջոցառումների, զեկույցների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ) և դրանց վտանգավորությանը,

• մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարմնակրթության և ֆիզիկական դաստիարակության խնդիրները,

• հարստացնել դպրոցի սպորտային բազան:

Տարեկան պլանավորում ըստ ոլորտների

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, դրանց վարումը

N	Գործողություններ	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	Նշումներ կատարման մասին
1	Կատարել 1-ին դասարանների կոմպլեկտավորում		Տնօրեն ՄԿԱԳ	
2	Հաստատման ներկայացնել • ՄԿԱԳ տեղակալի, դասղեկների պարտականությունները՝ ըստ աշխատանքի բաժանման (հիմքում՝ պաշտոնական, կանոնադրական պարտականությունները): • Հերթապահության կարգը: • Ուստարվա միջոցառումների պլանը: • ՄԿԱԳ տեղակալի և դասղեկների տարեկան աշխատանքային պլանը: • Գրադարանավարի տարեկան աշխատանքային պլանը:	Մինչև 01.09.22 Մինչև 01.09	Տնօրեն ՄԿԱԳ ՄԿԱԳ	
3	Իրականացնել վերահսկողություն • Պլանավորված աշխատանքների կատարման • Հաճախումների, դրանց հաշվառման • Էլմատենավարության աշխատանքների	Ամիսը 1 անգամ	Տնօրեն , ՄԿԱԳ, ուս.գծով փոխտնօրեն	

Աշխատանք մանկավարժական համակազմում (ուսուցիչների ինքնազարգացման ուղղությամբ աշխատանք)

1	Կազմակերպել աշխատաժողովներ ուսուցիչների հերթական ատեստավորման համար վերապատրաստումներ իրականացնող ուսուցիչների հետ: Կատարել աշախատանքի բաժանում ըստ վերապատրաստման բաժինների		Տնօրեն ՄԿԱԳ ՈՒԳ	

	դասավանդման նախապատրաստման ուղղությամբ:			
3	Աջակցել ներդպրոցական վերահսկողության պլանավորմանը ըստ ուսումնական գործընթացի փուլերի:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՈՒԳ ՄԿԱԳ	
4	Աջակցել ուստարվա ընթացքում մասնագիտական զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանւ. մեթոդական զեկույցներ, լսումներ, քննարկումներ	Ուստարվա ընթացքում	ՈւԳ ՄԿԱԳ	
5	Ապահովել ՏՀՏ վերապատրաստման շարունակելիությունը • Ուսումնասիրել ուսուցիչների ՏՀՏ կիրառումը դասերին • Ըստ կարողությունների և հմտությունների կազմել ՏՀՏ գիտելիքները խորացնելու աշխատանքի պլանավորում • Կազմել համապատասխան խմբեր ու աշխատանքային ժամանակացույց • Իրականացնել դասընթացը • Արդյունքում ստեղծված նյութերով հարստացնել ռեսուրս-կենտրոնը		ՄԿԱԳ Ուս.գծով փոխտնօրեն Ինֆորմատի-կայի մասնագետներ, օպերատոր	

Աշխատանք աշակերտական համակազմում (սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում)

1	Վերահսկել ծնողական լսարանի գործունեությունը՝ երեխայի դաստիարակության ժամանակակից սկզբունքների, մոտեցումների, մեթոդների, հնարների մասին տեղեկացնելու, կարողություններ, հմտություններ մշակելու նպատակով • Կազմել հարցաշար՝ գնահատելու համար ծնողների իրազեկությունը կրթական ինովացիաներին • Անցկացնել հարցում • Վերլուծել արդյունքը • Կազմել դասընթացի ծրագիր • Նախապատրաստել նյութեր	Սեպտեմբեր Սեպտեմբեր-հոկտեմբեր Նոյեմբեր	ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	

	• Կազմել աշխատանքային ժամանակացույց • Պարբերաբար անցկացնել հանդիպում- սեմինարներ • Կատարել գնահատում • Նախաձեռնել համատեղ միջոցառումներ • Անցկացնել տարվող աշխատանքների գնահատում	Փետրվար-մարտ Ապրիլ Մայիս-հունիս-հուլիս Օգոստոս		
2	Ընդգրկվել և ակտիվորեն մասնակցել հասարակական ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող միջազգային ծրագրերին • Հետևել միջազգային ծրագրերի կողմից հայտարարություններին • Ներկայացնել հայտ • Մասնակցել մրցույթին • Հետևողականորեն աշխատանք ծավալել ծրագրերի շրջանակներում • Արդյունքները մասսայականացնել աշակերտների, ուսուցիչների, ծնողների շրջանակում • Նախաձեռնել սեփական ծրագրեր՝ որպես շարունակություն	Ուստարվա ընթացքում Ըստ հայտ. Ժամանակա-ցույցի Ծրագրի ավարտին	ՄԿԱԳ տեղակալ ԴԱԿ	
3	Համագործակցել աշակերտների ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ • Ծանոթանալ աշխատանքային ծրագրերին • Մշակել սեփական աշխատանքային ռազմավարություն • Կատարել աշխատանքի բաժանում՝ փոխտնօրենների, • Դասղեկների, ուսուցիչների, աշակերտների • Մասնակցել միջոցառումների	Ըստ հայտարարու-թյունների	ՄԿԱԳ տեղակալ ԴԱԿ Դասղեկներ	

	• Նախաձեռնել սեփական միջոցառում՝ համագործակցությամբ • Գնահատել արդյունքները			
4	Սովորողների կողմից մասնագիտական կողմնորոշման և նախամասնագիտական կրթության ուղղորդվածության համապատասխան մակարդակի ապահովում • Կազմակերպել խորհրդատվություն ծնողների հետ • Կազմակերպել հանդիպումներ համապատասխան մասնագիտությամբ նշանավոր մարդկանց հետ • Մասնակցել Գիտսերնդի ամառային ուսուցողական ճամբարի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:	Օգոստոս Ընթացքում II կիսամյակ Տարեվերջ Ամիսը մեկ անգամ	ՄԿԱԳ տեղակալ ՄԿԱԳ տեղակալ ՄԿԱԳ տեղակալ Տնօրեն ՄԿԱԳ	

Համագործակցություն համայնքի հետ (հասարակություն- դպրոց կապի խորացում)

1	Ակտիվացնել ծնողխորհրդի գործունեությունը • Մասնակցել ծնողխորհրդի նիստերին, հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացումը • Կազմել հանդիպումների ժամանակացույց ամբողջ ուստարվա համար • Կազմակերպել համատեղ /ծնող, աշակերտ, ուսուցչական կոլեկտիվ/ տարեվերջյան միջոցառումներ • Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը հրապարակել կայքում, մամուլում	Ուստարվա ընթացքում Սեպտեմբեր Ուստարվա ավարտին	Տնօրեն ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ ՄԿԱԳ ՄԿԱԳ Ծնողխորհուրդ Դասղեկներ	

2	Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ • Դպրոցի միջոցառումներին հրավիրել քաղաքային իշխանության անդամներին, այդ թվում քաղաքապետին և հասարակական կազմակերպությունների ղեկավարներին • Փոխադարձաբար ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքային և հասարակական կազմակերպությունների միջոցառումներին • Պատրաստել տեսադիտաշարեր նշանավոր մարդկանց մասին և ցուցադրել • Կազմակերպել և անցկացնել հանդիպում – ցերեկույթներ քաղաքի նշանավոր մարդկանց՝ արվեստագետների, արհեստագործ-վարպետների, մշակույթի գործիչների, գործարարների հետ • Կազմակերպել այցելություններ արվեստագետների արհեստանոցներ • Կազմակերպել և կամ մասնակցել գրողների գրքերի շնորհանդեսներին • Կազմակերպել գրքերի քննարկումներ • Կազմակերպել հանդիպումներ քաղաքապետի և տեղական իշխանության ներկայացուցիչների հետ • Ակտիվորեն մասնակցել քաղաքային միջոցառումներին • Մշտապես ծանոթանալ քաղաքի նորություններին /հեռուստաալիքի, կայքերի / միջոցով • Հանդես գալ սեփական նախաձեռնություններով՝ << Մենք ենք մեր քաղաքը >> կարգախոսով / սանիտարական օրեր, ծառատունկ,	Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱԳ Տնօրեն ՄԿԱԳ ՄԿԱԳ Աշխորհուրդ Տնօրեն ՄԿԱԳ ԴԱԿ Տնօրեն ՄԿԱԳ Աշխորհուրդ ԴԱԿ Աշխորհուրդ ՄԿԱԳ ԴԱԿ	

	• Անդամագրվել քաղաքի երիտասարդական շարժմանը , որը գործում է քաղաքապետի հովանավորությամբ	Ուստարվա ընթացքում		
3	Դպրոցում աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող- ուսուցիչ առողջ աշխատանքային հարաբերությունների ապահովում **ա)**խթանել, ակտիվացնել աշակերտական խորհրդի աշխատանքը • Մասնակցել աշակերտական խորհրդի նիստերին, կատարել առաջարկություններ • Լսել աշխատանքային ծրագրերի կատարման հաշվետվություններ՝ խրախուսելով լավագույն նախաձեռնությունների, ակտիվ մասնակցության համար • Անցկացնել անանուն հարցումների աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ աշակերտների շրջանում • Մասնակցել արդյունքների վերլուծությանը • Խմբավորել առաջարկություններ՝ դրանց անդրադառնալու նպատակով • Աջակցել աշակերտական խորհրդին իր նախաձեռնությունների մեջ • Ակտիվ մասնակցություն ունենալ <<մենք ենք , մեր դպրոցը>> խմբի քննարկումներին համացանցում **բ)**ակտիվացնել ծնողխորհրդի աշխատանքը • Մասնակցել ծնողխորհրդի նիստերին • Առաջարկություններով հանդես գալ ծնողխորհրդի աշխատանքային պլանի մշակման համար • Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հաղորդումով հանդես գալ	Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում	Աշխորհուրդ Կազմակերպիչ ՄԿԱԳ ԴԱԿ ՄԿԱԳ Ծնողխորհրդի նախագահ Տնօրեն ՄԿԱԳ	

	• Լսել ծնողների հաշվետվությունները իրենց կատարած աշխատանքի մասին • Քննարկել ծնողների առաջարկությունները դպրոցի գործընթացների մասին • Կազմակերպել համատեղ միջոցառումներ • Աջակցել իրենց նախաձեռնություններում գ)Մանկավարժական խորհրդի աշխատանքը թափանցիկ դարձնել աշխորհրդի և ծնողխորհրդի համար • Մանկավարժական խորհրդի աշխատանքներին /համապատասխան մասով/ հրավիրել աշակերտական խորհրդի և ծնողխորհրդի նախագահներին • Լսել նրանց առաջարկությունները, հաղորդումները իրենց նախաձեռնությունների մասին	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ Ծնողխորհուրդ Տնօրեն Ծնողխորհուրդ Աշխորհուրդ ԴԱԿ	

Դպրոցում մշակութային մթնոլորտի ձևավորում

1	Բարձրացնել ոգեղենը ազգային և համաշխարհային մշակութային արժեքների հաղորդակից դարձնելով • Օգտվելով Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տրված աբոնեմենտներից՝ Կազմակերպել այցելություններ պատկերասրահներ, թանգարան-ներ, Մատենադարան • Հաճախել օպերա, թատրոններ, համերգներ • Կազմակերպել հանդիպումներ արվեստագետների, գիտության գործիչների հետ • Կազմակերպել էքսկուրսիաներ՝ Հայաստանի տարբեր վայրերում	Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ Դասղեկներ Մեթոդմիավորման նախագահներ ՄԿԱԳ ԴԱԿ ՄԿԱԳ ԴԱԿ	

	գտնվող պատմամշակութային կոթողները • Պատմության դասերի ստեղծված դիտաշարերով հարստացնել դպրոցի ռեուրս-կենտրոնի արվեստի բաժինը • Մասնակից դարձնել քաղաքի, երկրի մշակութային անցուդարձին		Պատմության ուսուցիչներ ԴԱԿ	
2	Խթանել ստեղծագործելու կարողությունները՝ սեփական նախաձեռնությունները արժևորելով դպրոցում • Լավագույն ստեղծագործական շարադրությունները պարբերաբար հրապարակել հայոց լեզվի և գրականության անկյունի վահանակում • Ստեղծագործող աշակերտների, ուսուցիչների ստեղծագործությունները պարբերաբար ներկայացնել << Հայրենականչ>> թերթում • Կազմակերպել գրական ցերեկույթներ դպրոցի շնորհալի աշակերտների մասնակցությամբ: • Կազմակերպել համերգներ դպրոցում շնորհալի աշակերտների միջոցով • Նախաձեռնել <<Վերադարձ դպրոց>> ստեղծագործական հանդիպումների շարքը:	Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում	Հայոց լեզվի մասնախումբ ՄԿԱԳ Գրադանավար ԴԱԿ ՄԿԱԳ ԴԱԿ	

Դպրոցում սովորողների և աշխատակազմի առողջ ապրելակերպի նյութական և բարոյահոգեբանական պայմանների ապահովում

1	Հետևել ֆիզկուլտուրայի դասավանդման դրվածքի արդյունավետությանը • Անբավարար պայմաններով սպորտդահլիճի և բացօթյա սպորտհրապարակի բոլոր հնարավորություններն օգտագործել ֆիզիկական դաստիարակության կազմակերպման որակը բարձրացնելու համար • Աջակցել առողջական ֆիզկուլտուրայի խմբակի ձևավորմանը • Կազմակերպել ակտիվ հանգիստ , էքսկուրսիաներ, արշավներ, ճամբար • Կազմակերպել սանիտարական օրեր • Հետևել պատվաստումների, բուժզննումների ժամանակին կատարելուն		Ուս. գծով փոխտնօրեն Տնօրեն Տնտեսական գծով փոխտնօրեն Տնօրեն ՄԿԱԳ ԴԱԿ Բուժքույր	